ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ «Տարածքային կառավարման մասին» օրենքով, ՀՀ այլ օրենքներով ու իրավական ակտերով և ՀՀ կառավարության որոշումներով՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը 2024 թվականին նկատելի աշխատանքներ է իրականացրել մարզի կենսագործունեության ապահովման, սոցիալ-տնտեսական զարգացման և հիմնահարցերի կարգավորման ուղղությամբ:

Գյուղատնտեսության ոլորտում 2024 թվականի հունվարի 1-ից 18-ն ընկած ժամանակահատվածում մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում անցկացվել է անասնագլխաքանակի համատարած հաշվառում: ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող «Գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության ծրագրերի» վերաբերյալ մարզի բոլոր համայնքներում պարբերաբար իրականացվել են իրազեկման և բացատրական աշխատանքներ, հեռավոր բնակավայրերում և սարատեղերում կազմակերպվել են հանդիպումներ և խորհրդատվություններ: Հանդիպումներին մասնակցել են շուրջ 500-550 տնտեսավարողներ:

«Բուսաբուծության աջակցության ծրագրի» շրջանակներում մարզում հավաստագրված սերմերով 2619 հեկտար գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և բազմամյա կերային մշակաբույսերով ցանք կատարած 592 շահառուներին, որպես սուբսիդիա, հատկացվել է շուրջ 205 միլիոն 700 հազար դրամ, իսկ համայնքների կողմից կատարված համատարած մոնիթորինգի աշխատանքների համար՝ 6 միլիոն 177 հազար դրամ: Մարզպետի աշխատակազմի համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է ընտրանքային մոնիթորինգ՝ 1287 հեկտարի վրա՝ 146 շահառուների ներգրավմամբ:

«ՀՀ –ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի» շրջանակներում 2024 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքներից ներկայացված 81 լիզինգային հայտերի արդյունքում ձեռք է բերվել 81 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 28 միավոր տրակտոր: Լիզինգի գումարը

կազմել է շուրջ 239 միլիոն 100 հազար դրամ: Ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար 2024 թվականին՝ դեկտեմբերի 1-ի դրությամբ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 64.4 միլիոն դրամ:

«Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության» ծրագրի շրջանակներում 2024 թվականին հաստատվել է Գեղարքունիքի մարզի շահառուների կողմից ներկայացված 3 հայտ՝ 40.7 միլիոն դրամի չափով, որի շրջանակներում ձեռք են բերվել հատիկավոր բույսերը չափաբաժիններով լցոնող և փաթեթավորող, ինչպես նաև հացահատիկային բույսեր տեսակավորող 7 սարքավորում, որոնք տեղակայվել են Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրում: Սուբսիդավորման գումարը կազմել է 57.8 միլիոն դրամ:

«**Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման»** ծրագրի շրջանակներում 2024 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն, Գանձակ, Ակունք, Խաչաղբյուր բնակավայրերի շահառուների կողմից ներկայացված 14 հայտ՝ 284.9 միլիոն դրամի չափով, կնքվել է 1032 հումքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 14.3 միլիոն դրամ:

«Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում 2024 թվականին Սևան քաղաքում կառուցվել է 2-րդ մոդելի ջերմատուն, փոխհատուցման գումարը կազմել է 36 միլիոն դրամ:

«ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության» ծրագրի շրջանակներում 2024 թվակաին Սևան համայնքի Գագարին բնակավայրում կնքվել է 1 վարկային պայմանագիր՝ շուրջ 3 հեկտարի վրա ջերմատուն կառուցելու նպատակով:

Ջերմատան կառուցման ներդրման արժեքը կազմում է 2.9 միլիարդ դրամ, որից 2.3 միլիարդ դրամ վարկային միջոցների տոկոսադրույքը սուբսիդավորվում է ՀՀ կառավարության կողմից:

Սևան համայնքի Լճաշեն բնակավայրում նույն ծրագրի շրջանակներում կնքվել է 1 վարկային պայմանագիր՝ 3 միլիարդ դրամի չափով՝ 5.49 հեկտարի վրա ջերմատուն կառուցելու նպատակով: 2025 թվականին այստեղ նախատեսված է ևս 1.6 միլիարդ

դրամի ներդրում՝ 5 հեկտարի վրա ջերմատուն կառուցելու նպատակով: 2024-2025 թվականների ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի շուրջ 125 նոր աշխատատեղ:

«Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակներում 2024 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 9 ապահովագրական պայմանագիր՝ շուրջ 231 հեկտար տարածք ապահովագրելու նպատակով:

ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագրի» շրջանակներում 2023 թվականին Գավառ համայնքում հիմնված 6 հեկտար տանձի այգու համար 2024 թվականին տրամադրվել է 34.6 միլիոն դրամ փոխհատուցում:

2024 թվականի մայիս ասմսվա ընթացքում Սևան համայնքի Գեղամավան բնակավայրում հիմվել է 1.9 հեկտար տանձի ինտենսիվ այգի, ծրագրի արժեքը կազմում է 68 միլիոն դրամ, իսկ ծախսերի մասնակի փոխհատուցման գումարը կազմում է՝ 34 միլիոն դրամ, որը կտրամադրվի մոնիթորինգի աշխատանքների արդյունքների ամփոփումից հետո:

«Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար փոխհատուցման» բաղադրիչով 260.8 հեկտարի վրա ոռոգման արդիական համակարգեր ներդնելու նպատակով Վարդենիս քաղաքի, Ներքին Գետաշեն և Սոթք բնակավայրերի 3 շահառուների 2024 թվականին տրամադրվել է 52.4 միլիոն դրամ փոխհատուցում:

«Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության» ծրագրի շրջանակներում Ճամբարակում կառուցված 2-րդ մոդելի՝ 25 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների «Խելացի» անասնաշենքի կառուցման համար 1 շահառուի տրամադրվել է 8.05 միլիոն դրամի չափով փոխհատուցում:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում և համարակալում» ծրագրի իրականացման նպատակով «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին հատակացվել է 166 միլիոն 743 հազար դրամ: Մարզում 8 անասնահամաճարակային հիվանդությունների կանխարգելման

նպատակով կատարվել են 591930 գլուխ ԽԵԿ-ի, 187963 գլուխ ՄԵԿ-ի և 1632 գլուխ ձիերի անասնահամաճարակային միջոցառումներ: Գեղարքունիքի մարզում 2024 թվականին կատարվել է 781525 կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ:

Հաշվետու տարում մարզում հաշվառված 75829 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներից համարակալվել են 28675 գլուխ կենդանիներ: Աշխատանքները շարունակական են: Համարկալման աշխատանքների դիմաց պետական բյուջեից հատկացվել է 11 միլիոն 470 հազար դրամ:

«**Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի»** շրջանակներում 2025 թվականին մարզում նախատեսվել է 3500 գլուխ կովերի հաշվով իրականացնելու արհեստական սերմնավորում:

«Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագրի» շրջանակներում 2024 թվականի դեկտեմբերին Գավառ համայնքի 1 մեղվաբույծ ձեռք է բերել 50 մեղվաընտանիք, փոխհատուցման գումարը կազմել է 2 միլիոն դրամ:

«ՀՀ –ում տավարաբուծության 2019-2024 թվականների զարգացման ծրագրի» շրջանակներում 2024 թվականի ընթացքում մարզի Վարդենիս համայնքի Խաչաղբյուր բնակավայրից ներկայացվել է 1 հայտ, որի հիման վրա 1 շահառուի հետ «Մոնբեյլարդ» ցեղատեսակի խոշոր եղջերավոր կենդանիների ձեռքբերման նպատակով կնքվել է վարկի տրամադրման պայմանագիր և հատկացվել է 5 միլիոն դրամ:

2024 թվականի հունիսի 1-ի դրությամբ, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի Գեղարքունիքի մարզային վարչության տվյալների և գյուղատնտեսության և ՇՄՊ վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների, համայնքներում կատարվել է 8843 հեկտար գարնանացան որից՝ հացահատիկային մշակաբույսերը կազմել են 8520 հեկտար՝ նախորդ տարվա 8888 հեկտարի դիմաց, հատիկաընդեղեն մշակաբույսերը՝ 323 հեկտար՝ նախորդ տարվա 153 հեկտարի դիմաց, կարտոֆիլի ցանքերը՝ 5691 հեկտար՝ նախորդ տարվա 6533 հեկտարի դիմաց, բանջարանոցային մշակաբույսերը՝ 939 հեկտար՝ նախորդ տարվա 1035 հեկտարիի դիմաց, տեխնիկական մշակաբույսերը՝ 72 հեկտար՝ նախորդ տարվա 31 հեկտարի դիմաց, կերային մշակաբույսերը՝ 7904 հեկտար՝ նախորդ տարվա 8475 հեկտարի դիմաց: Գարնանացանի վերջում պահպանված աշնանացանը կազմել է 10362 հեկտար՝ նախորդ տարվա 12642 հեկտարի դիմաց:

2024 թվականին ցանքային տարածությունը մարզի համայնքներում կազմել է ընդամենը 33816 հեկտար՝ նախորդ տարվա 37760 հեկտարի դիմաց: Վարելահողերի օգտագործման ցուցանիշը կազմել է 41 տոկոս:

2024 թվականին 10242 հեկտար աշնանացան ցորենի ցանքերից ստացվել է 24872 տոննա համախառն բերք, 1 հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 24.5 ցենտներ՝ նախորդ տարվա 26.3 ցենտների դիմաց: Գարնանացան գարու 7768 հեկտար ցանքատարածություններից ստացվել է 13494 տոննա համախառն բերք, 1հա-ի միջին բերքատվությունը կազմել է շուրջ 18 ցենտներ՝ նախորդ տարվա 21ցենտների դիմաց:

2024 թվականին 2023 թվականի համեմատությամբ գարնանացան գարու ցանքերը պակասել էին 519 հեկտարով, համախառն բերքն էլ պակասել է 3898 տոննայով: 2024 թվականին կարտոֆիլի 5691 հեկտար ցանքատարածություններից ստացվել է 117320 տոննա համախառն բերք, 1 հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 206.7ցենտներ՝ 2023 թվականին գրանցված 201.5 ցենտների դիմաց:

2024 թվականին բանջարեղենի 939 հա ցանքատարածություններից ստացվել է 17539 տոննա համախառն բերք, 1 հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 187.2 ցենտներ՝ 2023 թվականին գրանցված 290.3 ցենտների դիմաց:

2024 թվականին կուտակվել է շուրջ 147858 տոննա խոտ և 23587տոննա ծղոտ՝ նախորդ տարվա 80105 տոննա խոտի և 24327 տոննա ծղոտի փոխարեն:

Կուտակված անասնակերը բավարար է՝ գյուղատնտեսական կենդանիների ձմեռացումն ապահով և անկորուստ անցկացնելու համար:

2024 թվականին մարզի 5 համայնքների վարելահողերում և բազմամյա տնկարկներում միջին և բարձր վարակվածության բնակավայրերի 12928,5 հեկտար տարածքի վրա իրականացվել են մկների դեմ պայքարի միջոցառումներ:Նշված ծրագրի իրականացման նպատակով պետության կողմից ֆինանսավորումը կազմել է 6 միլիոն 63 հազար դրամ:

2024 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մարզի Ճամբարակ համայնքին անհատույց տրամադրել է 225 լիտր «Ալֆան» և 150 լիտր «Շարպեյ» տեսակի, իսկ Վարդենիս համայնքի Փամբակ բնակավայրին՝ 24 լիտր «Շարպեյ» տեսակի միջատասպան թունանյութեր՝ մորեխների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով:

«Գեղարքունիք» ՋՕԸ-ի կողմից 2024 թվականին իրականացվել է ոռոգում՝ 1820.3 հեկտարի վրա, նախորդ տարվա 2150 հեկտարի փոխարեն: Ջրօգտագործողների հետ կնքվել է 7411 պայմանագիր, նախորդ տարվա 7900-ի փոխարեն:

2024 թվականին իրականացված ոռոգման արդյունքում ծախսվել է 3.8 միլիոն կվտ/ժամ էլեկտրոէներգիա: Հաշվետու տարում նախորդ տարվա համեմատությամբ շուրջ 4.5 միլիոն կվտ/ժամ էլեկտրոէներգիա քիչ է ծախսվել, որը համարժեք է 210 միլիոն դրամի:

2024 թվականին տրված ջրի դիմաց հասույթը կազմել է 57միլիոն դրամ, գանձվել է 63 միլիոն դրամ կամ հավաքագրումը կազմել է 112 տոկոս:

Նախորդ տարիների դեբիտորական պարտքերի գծով 2024 թվականին պլանավորված 5 միլիոն դրամի փոխարեն գանձվել է 8 միլիոն դրամ, գանձման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով «Սևան» ազգային պարկի կառավարում» միջոցառման շրջանակներում «Սևան» ԱՊ-ի կողմից Սևանա լճի ափամերձ և ջրածածկված հատվածներում մաքրվել է շուրջ 18,8 հեկտար անտառային տարածք:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Վարդենիսի Արեգունի տեղամասում 5 հեկտար տարածքի վրա իրականացվել են ծառատնկման աշխատանքներ՝ 10000 տնկիներով:

2024 թվականին «Սևանի իշխան» ՓԲԸ-ի կողմից Սևանա լիճ է բաց թողնվել «Գեղարքունի» և «Ամառային» իշխանի կենսունակ մանրաձկան երկու խմբաքանակներ՝ շուրջ 389300 հատ:

Սևանա լճում 2024 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2025 թվականի հունվարի 20-ը, սիգի ձվադրման ժամանակահատվածով պայմանավորված, դադարեցվել է արդյունագործական ձկնորսության դադարեցման նպատակով, պատկան մարմինների հետ համագործակցությամբ, իրականացվել են խստացված միջոցառումներ:

Հողաշինության ոլորտում 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի համայնքներում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող 280 հազար հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերից վարձակալության են

տրամադրվել 76.7 հազար հեկտար՝ 2023 թվականին արձանագրված 73.6 հազարի դիմաց, որից 47.5 հազ հազար հեկտար համայնքային, 29.2 հազար հեկտար պետական սեփականություն հանդիսացող հողամասեր : Հաշվարկված 270.7 միլիոն դրամ վարձավճարի դիմաց գանձվել է 266.2 միլիոն դրամ վարձավճար: Գանձումը կազմել է 98.3 տոկոս՝ 2023 թվականին գանձված 97.1 տոկոսի դիմաց

Վարձակալության տրամադրված հողամասերը, ըստ հողատեսքերի, հետևյալն են՝ 21651 հեկտար վարելահող, 36 հեկտար պտղատու այգի, 9729 հեկտար խոտհարք, 45063 հեկտար արոտավայր և 221 հեկտար այլ հողատեսք:

Համայնքային սեփականության հողերի համար հաշվարկված 203.3 միլիոն դրամ վարձավճարի դիմաց գանձվել է 199.7 միլիոն դրամ, իսկ պետական սեփականության հողերի համար հաշվարկված 67.4 միլիոն դրամ վարձավճարի դիմաց՝ 66.5 միլիոն դրամ:

2024 թվականի ընթացքում մարզի 5 համայնքներում աճուրդ վաճառքով օտարվել են 114.04 հեկտարի չափով 370 միավոր հողակտորներ՝ 2023 թվականին օտարված 78.9 հեկտարի դիմաց: Հողի օտարումների արդյունքում համայնքների բյուջեներ է մուտքագրվել 315 միլիոն դրամ՝ 2023 թվականին մուտքագրված 309.2 միլիոն դրամի դիմաց: Հողամասերն օտարվել են սահմանված կադաստրային արժեքների շուրջ 110 տոկոսի չափով՝ /2023 թվականին արձանագրված 108 տոկոսի դիմաց: 2024 թվականի ընթացքում ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով մարզպետի կողմից տրվել են դրական եզրակացություններ մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության **2013.87** հեկտար արոտավայրերի, **22** հեկտար խոտհարքների և **40.1** հեկտար վարելահողերի ու **42** հեկտար այլ հողատեսքերի վարձակալության տրամադրելու վերաբերյալ: Նշված հողամասերը սահմանված կարգով տրվել են վարձակալության:

2024 թվականի ընթացքում ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով ՀՀ քաղաքաշինության կոմիտե է ներկայացվել **31** հողաշինարարական գործեր: Ուղարկված գործերից դրական եզրակացություններ են ներկայացվել **17** հողամասերի

նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ, իսկ մնացած **14** գործերը գտնվում են քննարկման փուլում՝ համապատասխան գերատեսչություններում։

Կազմվել և ՀՀ կադաստրի կոմիտե է ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի 2024 թվականի հողային հաշվեկշիռը։

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 համայնքներում գործում են 19 աղբավայր՝ նախկինում գործող 29 աղբավայրերի փոխարեն։ Աղբավայրերում պարբերաբար իրականացվել են հողի շերտով ծածկման և բարեկարգման աշխատանքներ։ Համայնքների կողմից սահմանված կարգով, ամենօրյա գրաֆիկով բոլոր բնակավայրերում կատարվում է աղբահանություն։ Մարզի 5 համայնքներում գործող 6 կոմունալ ՀՈԱԿ-ները աղբահանությունն իրականացնում են 39 ավտոմեքենաների միջոցով, 1400 միավոր աղբարկղերով։

«Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ծրագրի շրջանակներում Մարտունու փոխաբեռնման կայանի շինարարական աշխատանքներն ավարտվել են և ամբողջությամբ պատրաստվել շահագործման։ 2024 թվականի ընթացքում իրականացվել են մարզի համայնքներում կանխարգելիչ միջոցառումներ (սելավատարների և գետերի հունների մաքրում, պատնեշների վերականգնում, կառուցում, համապատասխան տեխնիկայի ձեռքբերում), կատարվել են դիտարկումներ և վտանգավոր հատվածների գույքագրում՝ անհրաժեշտության դեպքում կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու համար։

2024 թվականին մարզի համայնքներում ներդրվել է վաղ ազդարարման /շչակների/ կենտրոնացված կառավարման համակարգ։ Աշխատանքների կատարման առաջնահերթությունը վերապահվել է սահմանամերձ համայնքներին։ Արդյունավետ աշխատանքների համար անհրաժեշտ են 126 վաղ ազդարարման շչակներ և շչակի կառավարման թվային համակարգեր։ 2025 թվականի փետրվարի 15-ի դրությամբ, սակայն, առկա են 116 շչակ։ Գործող շչակները միացված են կառավարման համակարգին։ Առաջիկայում Մարտունի և Ճամբարակ համայնքների բնակավայրերում կտեղադրվեն 10 շչակ։

2024 թվականի ընթացքում մարզային փրկարարական վարչության կողմից անցկացվել է 28 հատուկ տակտիկական ուսումնավարժություն, 3 շտաբային ուսումնավարժություն՝ ԱԻ դեպքում բնակչության տարահանման կազմակերպումը թեմայով։ Անցկացվել է 26 սեմինար գործնական պարապմունք և 9 դասախոսություն-սեմինար՝ «Հրդեհաշիջում և

տուժածներին առաջին օգնության ցուցաբերում», «Հրդեհաշիջումը և տարահանումը մանկապարտեզներում», «Հրդեհաշիջում և տարահանում դպրոցներում» և «Տարածաշրջանին բնորոշ աղետներ» թեմաներով:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում ունկնդիրների վերապատրաստմանը մասնակցել են մարզի տարբեր ոլորտի 60 աշխատակիցներ:

2024 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն Մարտունի, Ճամբարակ, Վարդենիս և Սևան համայնքներում, որի արդյունքում արձանագրվել է 76 թերություն: Սահմանվել են ժամկետներ՝ թերությունները վերացնելու համար: Հայտնաբերված թերությունները քննարկվել են համայնքի ավագանու որոշումներով: Համայնքի ավագանու կողմից տրվել է հանձնարարականներ՝ թերությունները շտկելու վերաբերյալ: Կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է լիազոր մարմին:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ գործում են Գավառ, Սևան, Ճամբարակ, Վարդենիս համայնքներում և Շողակաթ և Գեղամասար բնակավայրերում:

2024 թվականին մարզի համայնքներում քաղաքացիների սպասարկման գրասենյակների կողմից սպասարկվել են 70297 քաղաքացի:

Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված և ՀՀ Գեղարքունիքի մարզ տեղափոխված բնակչության թիվը 2024 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմում է 3081 մարդ, 930 ընտանիք:

Մարզի 5 համայնքներում կայացել է 58 ավագանու նիստ: Ընդունվել է 1105 որոշում:

8 որոշում համապատասխան առաջարկություններով հետ է վերադարձվել տվյալ համայնք՝ թերությունները վերացնելու և օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ՏԿԵ նախարարության և պետական կառավարման ակադեմիայի կողմից վերապատրաստվել են 1 համայնքի ղեկավար և 24 ավագանու անդամ:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության և «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից «Համայնքների ավագանիների անդամների կարողությունների զարգացում» ծրագրով վերապատրաստվել են 103 ավագանու անդամ:

ՏԿԵ նախարարության, ՄԱԶԾ և Նորվեգիայի Թագավորության արտաքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ իրականացվող «Դիմակայունություն բոլորի

համար» ծրագրի շրջանակներում կազմակերպվող «Մասնակցային և ներառական դասընթացները համայնքի զարգացման համատեքստում» դասընթացով վերապատրաստվել են 79 ավագանու անդամ:

2024 թվականին 58 համայնքային ծառայող վերապատրաստվել են ՏԿԵ նախարարության և պետական կառավարման ակադեմիայի կողմից, 69 համայնքային ծառայող՝ ՏԿԵ նախարարության, ՄԱԶԾ և Նորվեգիայի Թագավորության արտաքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ իրականացվող «Դիմակայունություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում:

Հեռավար ուսուցման հարթակով վերապատրաստումներ են անցել 299 համայնքային ծառայող:

«Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրով վերապատրաստում են անցել 5 համայնքային սոցիալական աշխատողներ:

ՀՀ արդարադատության նախարարության և Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖԻ ներկայացուցչության կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացին մասնակցել են 14 համայնքային ծառայողներ:

2024 թվականին մարզի համայնքներում հայտարարվել է համայնքային ծառայության 108 մրցույթ, պաշտոնի են նշանակվել 57 համայնքային ծառայող: 51 հայտարարված մրցույթները չեն կայացել՝ դիմողներ չլինելու պատճառով:

2024 թվականին հայտարարվել է 47 ՀՈԱԿ-ների տնօրենների մրցույթ, կայացել է 9 մրցույթ, պաշտոնի նշանակվել են 8 տնօրեն, 38 հայտարարված մրցույթ չի կայացել՝ դիմողներ չլինելու պատճառով:

2024 թվականի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի և մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ 206 տնտեսվարողների հետ կնքվել են շինարարական աղբի հեռացման պայմանագրեր, որոնց արդյունքում համայնքային բյուջեներ կմուտքագրվի 24 միլիոն ՀՀ դրամ: Մարզի համայնքներում խմելու ջրագծերի ծրագրերի իրականացման ընթացքում տեղադրվել են 32 հակահիդեհային հիդրանտներ: Արդյունքում՝ մարզի համայնքներում այժմ առկա է 127 հիդրանտ:

2024 թվականի ընթացքում մարզային ենթակայության ***առողջապահական հաստատություններում*** տեղադրվել են Հիմնադրամի և Կարմիր Խաչի կողմից 420 կվտ/ժամ հզորության արևային կայաններ՝ 67 միլիոն 726 հազար դրամի ներդրմամբ, որոնք տարեկան կտրվածքով կձևավորեն շուրջ 31 500 000 դրամի խնայողություններ:

Հիմնադրամի և Կարմիր Խաչի կողմից ևս տեղադրվել են 17 ջրատաքացուցիչներ 6120 լիտր տարողությամբ:

Հանրակրթական հաստատություններում ներդրվել են 288 կվտ/ժամ հզորությամբ արևային կայաններ, որոնցից ակնկալվող խնայողությունները տարեկան կկազմեն շուրջ 20 միլիոն 672 հազար դրամ:

Համայնքային վարչական շենքերում և համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ներում տեղադրվել են 254,25 կվտ/ժամ հզորությամբ արևային կայաններ՝ 67 միլիոն 200 000 դրամ արժողությամբ, որոնցից ակնկալվող խնայողությունը կկազմի շուրջ 19 միլիոն դրամ: Տեղադրվել են նաև 3200 լիտր ընդհանուր տարողության 10 ջրատաքացուցիչներ՝ 3 միլիոն 500 000 դրամ արժողությամբ:

Կրթության ոլորտում 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակում մարզում գործող 124 դպրոցներ կոմպլեկտավորվել են 28888 աշակերտներով, որից մարզային ենթակայության 116 դպրոցներում՝ 27367, իսկ ԿԳՄՍ նախարարության ենթակայության 8 դպրոցներում՝ 1521 աշակերտներով: 2023-2024 ուստարվա համեմատ աշակերտների թիվը ավելացել է 467-ով:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 61 նախակրթարաններում 2024 թվականին հաճախել են 1092 սան, որից նոր բացված 8 նախակրթարանների 104 սանների ֆինանսավորումը նույնպես իրականացվել է ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Անցած ուսումնական տարում հանրակրթական դպրոցներից օլիմպիադայի ներդպրոցական փուլին մասնակցել են 8511 աշակերտ, որոնցից մարզային փուլին՝ 426-ը: Իսկ արդյունքում հանրապետական փուլին մասնակցած 70 աշակերտներից 13-ն արժանացել են դիպլոմի և 10-ը՝ գովասանագրի: Նախորդ ուսումնական տարվա համեմատ արդյունքները բարելավվել են 3 դիպլոմով և 1 գովասանագրով, իսկ Սևանի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Բենիամին Հայրապետյանը «Քիմիա» առարկայից բրոնզե մեդալալ է նվաճել միջազգային օլիմպիադայում:

Մարզի ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի 1029 սովորողների մոտ ապահովվել է հասարակագիտության առարկայական ծրագրում ներառված մեդիագրագիտությանը վերաբերվող հմտությունների զարգացումը:

2023-2024 ուսումնական տարում մարզի դպրոցների 1509 շրջանավարտներից ԲՈՒՀ են դիմել 922-ը, որից ընդունվել են 672-ը, որը 131-ով ավելին է նախորդ ուստարում բուհեր ընդունված աշակերտների թվից :

2024 թվականին հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններից հերթական պարտադիր ատեստավորման նպատակով վերապատրաստվել են 266 ուսուցիչներ և 49 մանկավարժական աշխատողներ:

2024 թ. տարեսկզբին մարզային ենթակայության դպրոցներում աշխատել են 266 կամավոր ատեստավորված ուսուցիչներ, որոնք տարվա ընթացքում ստացել են 342 միլիոն 224 հազար 400 դրամ հավելավճար: 2024 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին կամավոր ատեստավորման դրական շեմ են հաղթահարել ևս 223 ուսուցիչներ, որից 67-ը՝ նախկինում ատեստավորվածներ, որոնց հավելավճարները կհաշվարկվեն 2025 թվականի հունվարից: Տարեվերջում մարզային ենթակայության դպրոցներում փաստացի ունեցել ենք կամավոր ատեստավորված 493 ուսուցիչ:

Հաշվետու ժամանակաշրջանում տարակարգ ստացած 68 ուսուցիչներ, որոնցից 10-ը՝ 2024 թվականին, ստացել են 14 միլիոն 863 հազար 500 դրամ հավելավճար:

Մարզային ենթակայութան հանրակրթական դպրոցների ԲՏՃՄ առարկաներ դասավանդող 810 ուսուցիչներ ստացել են 157743100 դրամի և մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների 315 ուսուցիչներ՝ 108577500 դրամի հավելավճար: Արդյունքում, մարզային ենթակայության դպրոցների ուսուցիչներին տրվել է լրացուցիչ 623408500 դրամ հավելավճար, որից 18 դպրոցների 23 ուսուցիչներ ստացել են ամսական 400000 դրամ և ավելի աշխատավարձ:

2024 թ. հայտարարվել են 31 դպրոցների տնօրենների թափուր տեղերի համար մրցույթներ, որից հաղթող են ճանաչվել Մարտունու N 1, N 2 հիմնական, Այգուտի և Վահանի միջն. դպրոցներում, իսկ վարչատնտեսական մասի համակարգողներ են նշանակվել Գանձակի N 2, Սևանի N 4, Լուսակունքի, Զովաբերի, Կարմիրգյուղի N 1, Լիճքի հիմնական դպրոցներում: Ուսուցիչների թափուր տեղի համար հայտարարված մրցույթներում հաղթող են ճանաչվել և աշխատանքի ընդունվել 205-ը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 15 ուսուցիչներ գործուղվել են՝ մարզի դպրոցներում աշխատելու:

Հաշվետու տարում մարզում գործող 55 մանկապարտեզների 165 խմբերում հաճախել են 4197 երեխա:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության դպրոցներում ձևավորվել են 27 միասնական կառավարման խորհուրդներ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Ներքին Գետաշենի թիվ 1, Գեղհովիտի թիվ 2, Ջիլի միջնակարգ, Ճամբարակի թիվ 1, Լեռնակերտի և Շատջրեքի

հիմնական դպրոցների շինարարական աշխատանքները: Ավարտին է մոտենում մարզադահլիճների կառուցման և ամբողջական գույքով համալրման գործընթացը Ակունքի, Վերին Գետաշենի թիվ 2 և Գագարինի միջնակարգ դպրոցներում:

ՀՀ կառավարության «300 դպրոց, 500 մանկապարտեզի հիմնանորոգում, կառուցում» ծրագրում ընդգրկված են 10 կրթահամալիրներ՝ Մադինա, Մաքենիս, Շատվան, Կախակն, Արեգունի, Փոքր Մասրիկ, Արփունք, Թթուջուր, Մարտունի, Դպրաբակ բնակավայրերում, որոնցից Փոքր Մասրիկ, Կախակն, Արեգունի և Մադինա բնակավայրերում ներկայումս ընթանում են կրթահամալիրների նոր շենքերի կառուցման աշխատանքներ: Նոր կառուցվող կամ հիմնանորոգվող դպրոցների ցանկում ընդգրկված են նաև Երանոսի թիվ 2, Գավառի N 5 հիմնական, Գավառի N 7 միջնակարգ, Սևանի N 3 հիմնական, Ծովինարի միջնակարգ, Լիճքի հիմնական և Վարդենիսի N 3 հիմնական դպրոցները: Բացի հետևյալ կրթահամալիրներից ու դպրոցներից, վերոնշյալ որոշման ցանկի մեջ է ընդգրկվել նաև Գավառի N 1 հիմնական դպրոցի կառուցման ծրագիրը: Նոր դպրոցական շենքերի վերանորոգման կամ հիմնանորոգման ծրագրերում են ընդգրկվել ևս 7 դպրոցներ՝ Վարդաձորի, Ծակքարի, Զորագյուղի, Սարուխանի թիվ 2, Ծովագյուղի և Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ և Վաղաշենի մինջնակարգ դպրոցները, որոնցից վերջինումս արդենիսկ ընթանում են շինարարական աշխատանքներ : ՀՀ կառավարության «300 դպրոց, 500 մանկապարտեզի հիմնանորոգում, կառուցում» ծրագրի արդյունքում ունենք ընդգրկված նոր 36 հանրակրթական ուսումնական հաստատություններ, որից 2-ը՝ ավարտված, 14-ը՝ ընթացքի մեջ և 20-ը՝ նախատեսվող:

2024 թ. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և «Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամի» համագործակցության արդյունքում լուծվել է վառարանային ջեռուցում իրականացնող 2 դպրոցների խնդիրը: Վաննանի և Ճամբարակի N 4 միջնակարգ դպրոցներն ապահովվել են ջեռուցման լոկալ համակարգով, որտեղ ՀՀ պետբյուջեի միջոցներից ծախսվել է 24041900 դրամ, իսկ վերոնշյալ հիմնադրամի կողմից՝ 6900000 դրամ : Իսկ, նույն ծրագրի շրջանակներում, Այրքի միջնակարգ դպրոցում տեղադրվել են մոտ 75 քառակուսի մետր մակերես զբաղեցնող պատուհաններ՝ 2337000 դրամի շրջանակներում:

Մարտունու N 2 հիմնական, Ծովագյուղի, Ծափաթաղի, Այրքի և Գեղամասարի միջնակարգ դպրոցներում շահագործման են հանձնվել 88 կվտ/ժ հզորությամբ արևային կայաններ, որոնց ընդհանուր ներդրումը կազմել է 56 միլիոն 759 հազար 400 դրամ: Այդ կայաններից տարեկան սպասվող եկամուտը կկազմի մոտ 7 միլիոն 72000 դրամ:

ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագրով» Կարմիրգյուղի N 1, Նորատուսի N 2, Նորատուսի N 3, Զովաբերի, Այգուտի միջնակարգ և Նորաշենի հիմնական դպրոցներում տեղադրվել են արևային ֆոտովոլտային կայաններ՝ 170 կվտ/ժ ընդհանուր հզորությամբ, որոնց ընդհանուր ներդրումը կազմել է 40 միլիոն 942 200

դրամ: Այդ կայանները շահագործման կհանձնվեն 2025 թվականին, իսկ տարեկան սպասվող եկամուտը կկազմի մոտ 13 միլիոն 600 հազար դրամ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մարզի 53 հանրակրթական դպրոցներին տրամադրվող լաբորատոր սարքավորումները պատշաճ պայմաններում տեղակայելու նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի նախաձեռնությամբ նախատեսվել և իրականացման փուլում է 152 համապատասխան դասասենյակների վերանորոգման, արդիականացման աշխատանքները: Տարեվերջին 40 հանրակրթական դպրոցներում այս նպատակով ծախսվել է 87040816 դրամ: 27 դպրոցներ, որոնք ընդգրված չէին վերոնշյալ լաբորատորիաների ծրագրում, մարզպետի մեկ այլ նախաձեռնությամբ ապահովվել են 33297000 դրամի համակագիչներով և էլեկտրոնային գրատախտակներով, իսկ 88 դպրոցներին դրանք նախատեսվում է հատկացնել 2025 թվականին:

Համապատասխան գերատեսչություններ է ուղարկվել 10 դպրոցների կողմից մարզադահլիճների վերանորոգման և գույքի ձեռքբերման համար նախագծային փաստաթղթերը՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ կամ որևէ ծրագրում ընդգրկելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի 11 նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացվել է կառուցման , հիմնանորոգման և գույքով ապահովման տարբեր ծրագրեր՝ Բերդկունքի, Վարդենիսի Բանավան թաղամասի, Գեղամասար բնակավայրի , Ճամբարակի թիվ 3, Աստղաձորի, Սարուխանի թիվ 1, Գավառի թիվ 7, Երանոսի, Զորագյուղի, Վարդենիկի և Ծովասարի մանկապարտեզներում, որից Վարդենիկի և Ծովասարի մանկապարտեզների համար ՀՀ պետական բյուջեի միջոցներով կազմակերպվել են գույքի ձեռքբերման մրցույթներ, որի արդյունքում 35873500 դրամի շրջանակներում ապահովվել է 92 տեսակ գույքի մատակարարումը, իսկ Աստղաձորի մանկապարտեզի համար ևս կազմակերպվել է գույքի ձեռքբերման մրցույթ, որը կապահովվի 2025 թվականին: 2025-2026 թվականներին համայնքների սուբվենցիոն ծրագրերում ընդգրկվելու են ևս 19 մանկապարտեզների կառուցման, հիմնանորոգման, վերանորոգման և գույքով համալրման աշխատանքներ: Մարզում նախատեսվող 10 կրթահամալիրների կառուցման ավարտից հետո այդ կրթօջախներում ևս կիրականացվի նախադպրոցական կրթություն, որտեղ ընդգրկված կլինեն նաև նախադպրոցական ուսումնական հաստատություն չունեցող հարակից բնակավայրերի երեխաները:

Ներկայացրած տեղեկատվությունից բացի, մարզպետի աշխատակազմի ուշադրության կենտրոնում են նաև այն բնակավայրերը , որտեղ բացակայում կամ չեն բավարարում գործող մանկապարտեզների հզորությունները, այդիսկ պատճառով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ևս 11 բնակավայրերում նոր մանկապարտեզների կառուցման առաջարկություն:

Փաստորեն, 2021-2026 թվականների ծրագրում ընդգրկված 34 նախադպրոցական ուսումնական հաստատություններից 4-ում շինաշխատանքներն ավարտվել են, 11-ում գտնվում են ավարտական փուլում, իսկ 19-ում շինաշխատանքներ նախատեսվում են 2025-2026 թվականներին:

Մշակույթի ոլորտում 2024 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցականներից 9959-ը «Դպրոցականների համար բաժանորդային ծրագրի» շրջանակում այցելել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոն, Գեղարքունիքի երկրագիտական թանգարան, Ազգային պատկերասրահի Գավառի և Մարտունու մասնաճյուղեր:

Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի կազմավորման 32-րդ տարեդարձի օրը, անցկացվել է տոնական միջոցառում , որի մասնակիցների գերակշռող մասը եղել են 2-րդ բանակային կորպուսի զինվորներն ու սպայական կազմի ներկայացուցիչները, «Գեղարքունիքի Լ.Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի դերասանների կողմից ցուցադրվել է Ժիրայր Անանյանի «Բրավո» ներկայացումը:

Մեր մարզում մարտ-ապրիլ ամիսներին անցկացվել է «Թատերական երկամսյակ», որի շրջանակներում մեր մարզ են հյուրընկալվել և ներկայացումներով հանդես եկել ինը թատերախմբեր Երևանից և ՀՀ տարբեր մարզերից: Մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 3000 հանդիսատես:

ՀՀ Գեղարքունիքի Վ. Պետրոսյանի անվան մարզային գրադարանում ներդրված «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի շրջանակում 2024 թվականին 101 տարեցների և սահմանափակ կարողություններ ու հնարավորություններ ունեցող շահառուների մատուցվել են գրադարանային ծառայություններ:

Ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված մարզի հանրակրթական, արվեստի և երաժշտական դպրոցներում, գրադարաններում կազմակերպվել և անցկացվել են համերգային ծրագրեր, հեքիաթների ընթերցումներ, մանկական գրքերի ցուցադրություններ, շնորհալիների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ:

Մարզի հանրակրթական դպրոցների 12-րդ դասարանի արական սեռի ներկայացուցիչների շրջանում կազմակերպվել և անցկացվել է «Պարտաճանաչ զինվոր» խորագրով շարադրությունների մրցույթ, որին մեծ ակտիվությամբ են մասնակցում 12-րդ դասարանի տղաները. Արդյունքում՝ մարզպետի կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ ՊՆ և ծնողներին անակնկալ է մատուցվել՝ հաղթող զինծառայողներին տալով արձակուրդի հնարավորություն: Մրցույթին մասնակցել են 130 տղաներ:

«Քո արվեստը դպրոցում» կրթամշակութային ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք, Լիճք և Կարմիրգյուղ բնակավայրերի դպրոցներում

տեղի են ունեցել դասախոսություն-հանդիպումներ հայտնի 3 արվեստագետների հետ, որին մասնակցել են մարզի 37 դպրոցից 469 աշակերտ և 37 մանկավարժ:

Կանանց միջազգային օրվա ու Մայրության և գեղեցկության միամսյակի կապակցությամբ Արցախյան ազատամարտերի ու 44-օրյա պատերազմի մասնակիցների և զոհվածների մայրերի, կանանց, աղջիկների և ընտանիքի անդամների, ինչպես նաև մարզի առողջապահական, կրթամշակութային բնագավառի կին աշխատակիցների համար կազմակերպվել է տոնական միջոցառում և ցուցադրվել է Կարինե Խոդիկյանի «Սիրային քառանկյունի» ներկայացումը՝ Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի դերասանների կողմից:

Երևանի և մարզերի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» կրթական նպատակային ծրագրին մասնակցել է Սևան համայնքի Վ.Սարգսյանի անվան երաժշտական դպրոցը, որի սաները համերգային ծրագրով հանդես են եկել Երևանի Ստ.Զրբաշյանի անվան երաժշտական դպրոցում, վերջիններն էլ փոխադարձ այցով համերգային ծրագրով հանդես են եկել Սևանի երաժշտական դպրոցում: Ծրագրին մասնակցել է շուրջ 195 աշակերտ:

2024 թվականին Գավառ քաղաքն ընտրվել է 2024 թվականի Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք: Այդ առիթով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, համագործակցելով Գավառի համայնքապետարանի հետ, աջակցել է բազմաթիվ միջոցառումների կազմակերպմանը: Անցկացված միջոցառումների թիվը գերազանցել է շուրջ 50՝ 6300 մասնակիցներով:

«Դասարան +Դասական» ստեղծագործական կրթական ծրագրին մասնակցել են մեր մարզի երեք աշակերտներ, որոնցից մեկը հաղթող է ճանաչվել և մասնակցել երկշաբաթյա մասնագիտական դասընթացին: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի Լ.Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանները հանդիպել են մարզի դպրոցների շուրջ 50 աշակերտների հետ, անցկացրել մասնագիտական կողմնորոշման զրույց-զեկուցումներ, քննարկումներ: Աշակերտները փոխադարձաբար այցելել են թատրոն, ծանոթացել ներկայացումների կազմակերպչական աշխատանքներին:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և Իզեր դեպարտամենտի միջև եղած համագործակցության համատեքստում կազմակերպվել և ցուցադրվել է Ժան-Լյուկ Լագարսի «Ես տանն էի և սպասում էի անձրևի գալուն» պիեսը, որը դիտել է 150 հանդիսատես:

Սպորտի ոլորտում 2024 թվականին «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խաճուղային հեծանվավազքի մրցաշարն անցկացվեց նոր ձևաչափով՝ դպրոցական թիմերի միջև: Մրցաշարի ՀՀ մարզային փուլն անցկացվել է Ծովագյուղ-Շողակաթ-Վարդենիս մայրուղու «Արևիկ» հանգստյան գոտուց դեպի

Շողակաթ բնակավայր տանող 20 կիլոմետրանոց ճանապարհահատվածում, որին մասնակցել են 83 դպրոցների թիմեր՝ 166 մարզիկներով:

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի մարզային փուլն անցկացվել է երկու տարիքային խմբերով, որին մասնակցել են 68 հանրակրթական դպրոցների 460 աշակերտ, այդ թվում 232-ը՝ 1-ին տարիքային խմբում և 228 աշակերտ՝ 2-րդ տարիքային խմբում: Եզրափակիչ փուլին մասնակցել են Գավառի ավագ և Ծափաթաղի միջնակարգ դպրոցների թիմերը:

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարը կազմակերպվել է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Շորժայի հանրային լողափում, որի նախապատրաստական աշխատանքներին ակտիվ մասնակցել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը: Մրցաշարին մարզից հայտավորվել էր 7 լողորդ:

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղավազքի մրցաշարին մարզից մասնակցել են 106 մարզիկ, որից 1 մարզիկ մրցանակային տասնյակում է:

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մարզային փուլը անցկացվել է Ծովինար բնակավայրի հարակից անտառային տարածքի 5 կիլոմետրանոց արահետային խճուղում: Խճուղավազքի մարզային փուլին մասնակցել են 28 դպրոցական թիմեր՝ 196 մարզիկներով, իսկ հաղթող Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմը մասնակցել է եզրափակիչ փուլին. նախորդ տարվա համեմատ մասնակիցների թիվն աճել է 42-ով:

ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում և հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել է «Գեղարքունյաց ձմեռ-2024» մարզամշակութային մասսայական միջոցառումը, որին մասնակցել են շուրջ 15 հազար պատանիներ ու աղջիկներ:
Պետական և ուժային կառույցների միջև անցկացվել է ֆուտզալի մարզային առաջնություն:
Առագաստանավային սպորտի հայկական ֆեդերացիայի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի համագործակցությամբ Սևանի «Նոյ Լենդ» հանգստյան գոտու լողափնյա տարածքում կազմակերպվել է առագաստանավային սպորտի Հայաստանի բաց առաջնություն :
Մարզի լավագույն մարզիկները և թիմերը մասնակցել են Աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, միջազգային և հանրապետական մրցաշարերի՝ գրավելով տարբեր մրցանակային տեղեր:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մարզի բոլոր միջնակարգ դպրոցներին նվիրաբերվել են 6-ական, հիմնական դպրոցներին 2-ական, իսկ ավագ դպրոցներին 4-ական հեծանիվներ՝ ընդհանուր 618 հատ՝ 70044120 դրամ արժեքով:

Վերը նշվածից բացի՝ մարզում մասսայական սպորտի բնագավառում կազմակերպվել են ֆուտբոլի, շախմատի, վոլեյբոլի, բռնցքամարտի, հրաձգության, բազկամարտի, ըմբշամարտի մարզային առաջնություններ:

Առողջապահության ոլորտում 2024 թվականին Գեղարքունիքի մարզում գործել են մարզային ենթակայության 36 առողջապահական հիմնարկներ՝ չորս բժշկական, մեկ առողջության կենտրոններ, մեկ ծննդատուն, 12 բժշկական ամբուլատորիաներ և 18 առողջության առաջնային պահպանման կենտրոններ: Առողջապահական հիմնարկների կազմում գործում են նաև 54 բուժակ մանկաբարձական կետեր:

2024 թվականին մարզային ենթակայության առողջապահական հիմնարկների ընդհանուր եկամուտները կազմել են 5 միլիարդ 206 միլիոն 253 հազար 978 դրամ՝ 2023 թվականին արձանագրված 4 միլիարդ 751 միլիոն 264 հազար 150 դրամի դիմաց: Աճը կազմել է 454 միլիոն 989 հազար 828 ՀՀ դրամ, կամ՝ 9,5 տոկոս:

«Գավառի ԲԿ» ՓԲԸ –ում 2024 թվականի ընդհանուր եկամուտները կազմել են 973,7 միլիոն դրամ՝ 2023 թվականի 955,1 միլիոն դրամ կատարողականի դիմաց : Աճը կազմում է 18,5 միլիոն դրամ, կամ՝ 1,9 տոկոս:

«Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ում 2024 թվականի ընդհանուր եկամուտները կազմել են 1 միլիարդ 430 միլիոն դրամ՝ 2023 թվականի 1 միլիարդ 239 միլիոն դրամ կատարողականի դիմաց: Աճը կազմում է 191,6 միլիոն դրամ, կամ՝ 15,4 տոկոս:

«Վարդենիսի ԲԿ» ՓԲԸ-ում 2024 թվականի ընդհանուր եկամուտները կազմել են 442,7 միլիոն դրամ՝ 2023 թվականի 381,9 միլիոն դրամ կատարողականի դիմաց: Աճը կազմել է 60,7 միլիոն դրամ, կամ՝ 15,9 տոկոս:

«Ճամբարակի ԱԿ» ՓԲԸ-ում 2024 թվականի ընդհանուր եկամուտները կազմել են 246,9 միլիոն դրամ՝ 2023 թվականի 231,6 միլիոն դրամ կատարողականի դիմաց: Աճը կազմել է 15.3 միլիոն դրամ, կամ՝ 6,6 տոկոս:

«Սևանի ԲԿ» ՓԲԸ –ում 2024 թվականին ընդհանուր եկամուտները կազմել են 833,1 միլիոն դրամ՝ 2023 թվականի 740,7 միլիոն դրամ կատարողականի դիմաց: Աճը կազմել է 92,4 միլիոն դրամ, կամ՝ 12,4 տոկոս:

«Մարտունու ծննդատուն» ՓԲԸ- ում 2024 թվականի ընդհանուր եկամուտները կազմել են 212,7 միլիոն դրամ՝ 2023 թվականի 228,6 միլիոն դրամի դիմաց: Թերակատարվել է 15.9 միլիոն դրամ:

Առողջության առաջնային պահպանման օղակի բուժիմնարկների ընդհանուր եկամուտները 2024 թվականին կազմել են 1 միլիարդ 66 միլիոն դրամ՝ 2023 թվականի 924, 9 միլիոն դրամ կատարողականի դիմաց: Աճը կազմել է 15,3 տոկոս:

2024 թվականին մարզային ենթակայության առողջապահական հիմնարկների **պետպատվերով եկամուտները** կազմել են 4 միլիարդ 328 միլիոն 630 հազար 134 դրամ՝ 2023 թվականի 4 միլիարդ 019 միլիոն 903 հազար 806 դրամի դիմաց: Աճը կազմել է 308 միլիոն 726 հազար 328 դրամ, կամ՝ 7,6 տոկոս:

2024 թվականին մարզային ենթակայության առողջապահական հիմնարկների **վճարովի ծառայություններից եկամուտները** կազմել են 857 միլիոն 623 հազար 844 դրամ՝ 2023 թվականի 746 միլիոն 254 հազար 898 դրամի դիմաց: Աճը կազմել է 111,4 միլիոն դրամ, կամ՝ 14,9 տոկոս:

ՀՀ Գեղարքունիքի մարզի առողջապահական հիմնարկների ենթակայությամբ գործող 54 ԲՄԿ-ների շենք-շինությունները մինչև 2022 թվականը եղել են համայնքապետարանների հաշվեկշիռներում: Գեղարքունիքի մարզպետի նախաձեռնությամբ դրանցից 45-ն անվարձահատույց օգտագործման պայմանագրով տրամադրվել է մարզային ենթակայության առողջապահական հիմնարկներին, որոնցից 14-ը վերանորոգվել է:

Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի հետ համագործակցությամբ կառուցվել է Շատվանի ԲՄԿ-ն՝ 31 միլիոն 070 հազար դրամ արժողությամբ: Սոթքում տեղադրվել է մոդուլային ԲՄԿ՝14 միլիոն դրամ արժողությամբ:

«Մարտունու ծննդատուն» ՊՓԲԸ շենքում վերանորոգվել և կահավորվել է ներարգանդային սերմնավորման ծառայություն մատուցող կաբինետը, որը 2025 թվականի հունվարի 14-ից սկսել է իր աշխատանքը:

«Գավառի ԲԿ» ՓԲԸ շենքում վերանորոգվում է համակարգչային շերտագրման սարքի տեղադրման համար նախատեսված տարածքը:

Գործընկեր կազմակերպությունների կոմից վերանորոգվել է «Վարդենիսի ԲԿ» ՓԲԸ-ի Emergency-ի տարածքը: Նախագիծ է ձեռք բերվել՝ ՀՀ կառավարության կողմից հատկացրած 20 միլիոն դրամ դրամաշնորհով «Վարդենիսի ԲԿ» ՓԲԸ-ում վերանորոգման աշխատանքներ կատարելու համար:

Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի միջև հաստատված ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում կապիտալ վերանորոգվել և վերազինվել է Ծովինարի բուժամբուլատորիան , ինչպես նաև 2024 թվականի բյուջեով հաստատվել է Վերին Գետաշենի բուժամբուլատորիայի կապիտալ վերանորոգման ծրագիրը՝ 20 միլիոն 118 հազար 700 դրամ արժեքով:

Մարզի բուժհիմնարկներում բարձր կատարողականը պայմանավորված է **նոր բժշկական սարքավորումների ձեռքբերմամբ և նոր ծառայությունների ներդրմամբ:** Նոր ձեռք բերված բուժսարքավորումներն են՝ ավտոմատ արյունաբանական վերլուծիչ, 5 հատ էլեկտրասրտագիր սարք, արյան գազային վերլուծիչ, էնդովիրահատական սարք, **ա**վտոմատ արյունաբանական վերլուծիչ, **կ**իսավտոմատ մեզի վերլուծիչ, **հ**եմոդիալիզի սարք, ֆիրմայի երևակման սարք, ուլտրաձայնային սկանավորման սարքավորում, ավտոկլավ, **դ**եֆիբրիլյատոր, **հ**եմոգլոբին չափող սարք, **բ**ժշկական սարքերի հավաքածուներ, **ա**րթրոսկոպիկ վիրահատական համակարգ, շարժական պուլսօքսիմետր, հեմոդիալիզի էլեկտրական բազկաթոռ, **դ**ոնորական պարկերի խողովակների զոդիչ՝ շարժական մարտկոցով, **փ**ոխներարկվող արյան էրոթրոցիտար զանգվածի և արյան զանգվածի 6 պլազմայի տաքացուցիչ սարք, **ց**ենտրիֆուգված դոնորական արյան բաղադրամասերի պլազմահանիչ մանուալ, Mindray BS-240 PRO՝ ներառյալ 44 հավաքածուները, թոքերի արհեստական օդափոխության սարք, **լ**աբորատոր ցենտրիֆուգ, 4 հատ նորածնի ինկուբատորի հավաքածու, 5 հատ արյան մեջ գլիկոհեմոգլոբինի մակարդակի չափիչ, վիրաբուժական արտածծիչ: Մարզի առողջապահական հիմնարկներում 2024 թվականին ներդրվել է **17 նոր ծառայություն**: Դրանք են՝ ուռոլոգիական վիրահատական, **հ**ամակարգչային շերտագրման, էլեկտրոմիոգրաֆիայի, **է**լեկտրոէնցեֆալոգրաֆիայի, տրեդմիլ թեստի, **գ**լիկոհեմոգլոբինի մակարդակի չափման, **մ**անկական անեսթեզիոլոգիայի, էլաստոգրաֆիայի, **ռ**ևմատոլոգիայի, **օ**րթոպեդիայի, ՄԻԱՎ հետազոտության, անոթային վիրաբուժության, **ֆ**ունկցիոնալ ախտորոշման, **գ**աստրոսկոպիայի, **կ**ոլոնոսկոպիայի,**վ**նասվածքաբանական, **ա**կնաբուժական վիրահատական ծառայությունները:

Մարզային ենթակայության առողջապահական հիմնարկներում 2024 թվականին ձեռք է բերվել 106 միլիոն 625 հազար 758 դրամի գույք և սարքավորումներ, իրականացվել 79 միլիոն 844 հազար 240 դրամի շինարարական աշխատանքներ։

Գեղարքունիքի մարզպետի անմիջական նախաձեռնությամբ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և տարբեր միջազգային կազմակերպությունների համագործակցության արդյունքում, ջրատաքացուցիչներ և արևային ֆոտովոլտային կայաներ են տեղադրվել մարզի առողջապահական հիմնարկներում։ 150-ական կիլովատտ ժամ հզորության արևային կայաններ տեղադրվել են Մարտունու, Գավառի և Սևանի բժշկական կենտրոնների, 120 կիլովատտ ժամ հզորության կայան՝ Ճամբարակի առողջության կենտրոնի տանիքներին։ Այս նախաձեռնության կյանքի կոչման արդյունքում ձևավորվում են խնայողություններ՝ տարեկան 7,5-ից մինչև 12 միլիոն դրամի չափով, որոնք ուղղվելու են վերոնշյալ բուժհաստատությունների հետագա զարգացմանն ու հզորացմանը։
Կութի, Նորաբակի,Ազատի, Դարանակի և Շատվանի ԲՄԿ-ների վրա տեղադրված է 3 ԿՎՏ հզորության արևային համակարգ։ 2025 թվին ծրագրվում է 10 ԿՎտ հզորությամբ արևային համակարգերի տեղադրել Մեծ Մասրիկի և Ծովակի ԱԱՊԿ-ներում, 80 կՎտ հզորությամբ արևային համակարգ՝Վարդենիսի բժշկական կենտրոնում, որտեղ այս պահին գործում է 5 կվտ ժամ հզորության արեւային կայանք և 600 լիտր տարողության ջրատաքացուցիչ։

Մարզի առողջապահական հիմնարկներում ընդհանուր աշխատողների թիվը կազմում է 1532, որոնցից բժիշկները 306-ն են, միջին բուժաշխատողները՝ 755-ը, կրտսեր բուժաշխատողները՝ 186-ը, վարչական աշխատողները՝ 273-ը։

2024 թվականին Գեղարքունիքի մարզում ծնվել է 2125 երեխա՝ 1163 տղա և 962 աղջիկ։ Նրանցից մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել են 1488-ը՝ 827 տղա և 661 աղջիկ։

Սոցիալական աջակցության ոլորտում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի «Այլ նպաստներ բյուջեից» տողով 38 միլիոն 434 հազար դրամ աջակցություն է տրամադրվել 1090 սոցիալապես անապահով ընտանիքների։

Օգնություն է տրամադրվել նաև զոհված զինծառայողների անչափահաս երեխա ունեցող 64, ԼՂ-ից բռնի տեղահանված և անչափահաս երեխաներ ունեցող 43 կարիքավոր, չորս և ավելի դպրոցահասակ երեխա ունեցող 181 կարիքավոր ընտանիքների՝ դպրոցական պարագաների ձեռքբերման համար:

200 հազարական ՀՀ դրամ աջակցություն է հատկացվել 44-օրյա պատերազմի 8 անհայտ կորածների ընտանիքների և 2022 թվականի սեպտեմբերյան ագրեսիայի հետևանքով 1 անհայտ կորածի ընտանիքի:

100 և ավելի տարեկան 7 կենսաթոշակառուների տրամադրվել է 350 հազար դրամ:
Մարզի առավել անապահով, զոհված և վիրավորում ստացած ազատամարտիկների, ծնողազուրկ, բազմազավակ և ԼՂ-ից բռնի տեղահանված անապահով ընտանիքների 298 երեխա հանգստացել են ամառային ճամբարներում:
Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքների 16 երեխաներ անցել են սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագիր Սլովենիայի Դեբելի Ռտիչի հանգստավայրում :
Արցախից տեղահանված շուրջ 1100 ընտանիք պարբերաբար ստացել են սննդի, հագուստի և հիգիենիկ պարագաների փաթեթներ:
«ՀՀ սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2024 թվականների ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզից շահառու հանդիսացող 64 ընտանիքների կողմից իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ տրամադրվել է շինարարության թույլտվություն, որից 8-ը՝ Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրում և 56-ը՝ Վարդենիս համայնքի Վերին Շորժա, Ներքին Շորժա, Կութ, Ազատ, Սոթք բնակավայրերում:
Ճամբարակ համայնքի 8 շահառուներից 6-ը երկու փուլերով ստացել են ամբողջական գումարը, իրականացրել շինարարական աշխատանքներ, 2-ին բանկը մերժել է՝ փաթեթը ուշ ներկայացնելու պատճառով:
Վարդենիս համայնքի 56 շահառուներից 49-ը ստացել են գումարը,, որոնցից 36-ն իրականացրել են շինարարական աշխատանքներ, իսկ 13-ը աշխատանքները կսկսեն 2025 թվականի գարնանը:

Ֆինանսական ոլորտում ՀՀ Պետական բյուջեով 2024 թվականին ՀՀ գեղարքունիքի մարզին ճշտված բյուջեով նախատեսվել է 18 միլիարդ 77 միլիոն 817 հազար 400 դրամ, որից փաստացի ֆինանսավորվել է 17 միլիարդ 743 միլիոն 960 հազար 900 դրամ, կամ՝ 98,2 տոկոսով:

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ ֆինանսների և ՀՀ ԿԳՄՍ նախարարությունների կողմից սահմանված կարգով ու ժամկետներում մշակվել են մարզային ենթակայության բյուջետային կազմակերպությունների 2025-2027 թվականների Միջնաժամկետ

ծախսային ծրագրերը, բյուջետային հայտերի տեսքով խմբավորվել և ներկայացվել են ՀՀ կառավարություն ու համապատասխան նախարարություններ:

ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացվել է հանրակրթական դպրոցների աշակերտների թվի /տարբերակված հարթավայրային, լեռնային և բարձր լեռնային, միևնույն բնակավայրում միակ, ինչպես նաև նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների/ հաշվետու տարվա ճշտված ծախսերի անհատական և ամփոփ նախահաշիվները ցանցային ցուցանիշներով:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված մեթոդական ցուցումների համաձայն /ներառյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափերի/ կազմվել են 2025 թվականի բյուջետային հայտերը և ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ապահովվել է մարզպետի աշխատակազմի մասնակցությունը մարզային ենթակայության բյուջետային կազմակերպությունների 2024 թվականների պահպանման ծախսերի նախահաշիվների կազմման, տնտեսագիտական դասակարգման հոդվածների փոփոխությունների կատարման, ինչպես նաև գանձապետական բաժանմունք-բյուջետային կազմակերպություն հարաբերությունների կարգավորմանը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններից հավաքագրվել է հանրակրթության, նախադպրոցական կրթության, հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման, ուսուցիչների կամավոր ատեստավորման, ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարի տրամադրման, ՀՀ ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ուսուցիչների վարձատրության, ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցներում հավելավճարների, 2020-2023 թ.թ. ԼՂՀ-ից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակության, ուսուցիչների հերթական վերապատրաստման, արտադպրոցական դաստիարակության ծրագրերի գծով ցանցային ցուցանիշներին վերաբերվող տեղեկատվությունը, որի հիման վրա կատարվել են յուրաքանչյուր ծրագրով հաշվարկներ, որից հետո իրականացվել է պայմանագրերի կնքում, նախահաշիվների ընդունում, համապատասխան պլանավորում և ըստ ամիսների նաև ֆինասավորում: Բացի այդ ծրագրերը, վարչությունն իրականացրել է ևս 25 ծրագրերի գծով պլանավորման, ֆինանսական համակարգ մուտքագրման և վճարման գործառույթները:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում կատարվել է հաստատված նախահաշիվների փոփոխություններ, ինչի արդյունքում ընթացիկ և կապիտալ վերանորոգմանը հատկացվել է 142 միլիոն 125.9 հազար դրամ, գույքի ձեռքբերման համար՝ 38 միլիոն 971.4 հազար դրամ, այլ աշխատանքների ու

ծառայությունների համար՝ 4 միլիոն 624.6 հազար դրամ: Ընդհանուր գումարը կազմել է 185 միլիոն 821.9 հազար դրամ: Հանրակրթական ուսումնական ծրագրերը կատարվել են ամբողջ ծավալով:

ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրամադրված սուբվենցիայի նպատակային օգտագործման նպատակով մարզի համայնքներից հավաքագրվել են համապատասխան կատարողական ակտերը և ժամանակին ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն, որի արդյունքում նախատեսված 5 միլիարդ 527 միլիոն 107 հազար 800 դրամից փաստացի ֆինանսավորվել է 5 միլիարդ 398 միլիոն 908 հազար 800 դրամ: ՀՀ պետական բյուջեից վերաբաշխման արդյունքում Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման նպատակով մարզին հատկացվել է 24 միլիոն 42 հազար 700 դրամ, որը բաշխվել է 2 դպրոցների միջև: Սահմանված կարգով և ժամկետներում հավաքագրվել, ստուգվել և համապատասխան գերատեսչություններ են ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, նրա ենթակա կազմակերպությունների և մարզի համայնքների կողմից ներկայացված ամսական, եռամսյակային և տարեկան ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ: Մարզի համայնքներին տրամադրվել է մեթոդական և խորհրդատվական օգնություն համայնքների 2025 թվականի ՄԺԾԾ հայտերը կազմելու, ինչպես նաև 2025 թվականի բյուջեները կազմելու ուղղությամբ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 համայնքների 2024 թվականի սեփական եկամուտների տարեկան պլանային թիվը կազմում է 3 միլիարդ 294 միլիոն 680 հազար դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավել է պլանավորվել 473 միլիոն 327 հազար 200 դրամով: Սեփական եկամուտների կատարողականը կազմել է 107,9 տոկոս կամ պլանավորված 3 միլիարդ 294 միլիոն 680 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 3 միլիարդ 556 միլիոն 277 հազար 500 դրամ: Փաստացի հավաքագրված թիվը նախորդ տարվա նկատմամբ ավել է 433 միլիոն 139 հազար դրամով:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջվող ժամկետում կազմվել է մարզպետի աշխատակազմի և նրա ենթակայության կազմակերպությունների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման տեխնիկական բնութագրերը՝ ըստ սահմանված չափորոշիչների և այն հաստատվելուց հետո ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն: 2024 թվականին կազմակերպված գնումների ընթացակարգերը 67-ն են, որոնք ամբողջությամբ կայացել են: Գնման ձևերի բաշխվածությունը, ըստ դրամական արտահայտության, հետևյալն է. մրցակցային ընթացակարգ՝ 651 միլիոն 900 հազար դրամ, կամ՝ 96,77 տոկոս, հրատապ մեկ անձ՝ 250 հազար դրամ, կամ՝ 0,04 տոկոս, մեկ անձից գնում՝ 21 միլիոն 470 հազ. դրամ, կամ 3,19 տոկոս:

Հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան՝ մարզում իրականացվել է հաշվապահական հաշվառում, հաշվետվությունների կազմում, ամփոփում և ներկայացում:

2024 թվականի բյուջեի համամասնությունները հաստատվելուց հետո կազմվել են գնման և վճարման ժամանակացույցեր, որոնք հաստատվելուց հետո դարձել են գնման փաթեթներ: Մարզպետի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կարիքների համար գնումները կատարվել են՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով:

Սուբվենցիոն ծրագրերի ոլորտում 2018-2024 թվականների ընթացքում մարզի համայնքների կողմից նախնական ներկայացվել են 513 սուբվենցիոն ծրագրային հայտեր, որոնցից 427-ը միջգերատեսչական հանձնաժողովի կողմից արժանացել են հավանության: 2018-2024 թվականներին իրականացված սուբվենցիոն ծրագրերն ըստ կառավարություն-համայնք- մասնավոր հատված համաֆինանսավորումների, կազմել է 38,6 միլիարդ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը կազմել է 22,8 միլիարդ , համայնքների համաֆինանսավորումը՝ 15,6 միլիարդ և մասնավոր ներդրումները՝ 148,6 միլիոն դրամ:

Գեղարքունիքի մարզում 2018 թվականին իրականացվել է 1 միլիարդ դրամի, 2019 թվականին՝ 4,4 միլիարդ դրամի, 2020-ին՝ 4,4 միլիարդ դրամ, 2021-ին՝ 5,8 միլիարդ դրամի, 2022-ին՝ 9,7 միլիարդ դրամի, 2023-ին՝ 11,1 միլիարդ դրամի և 2024-ին ՝ 11,2 միլիարդ դրամի սուբվենցիոն ծրագրեր:

2018-2024 թվականների ընթացքում Գավառ համայնքում իրականացվել են 90, Սևան համայնքում՝ 62, Ճամբարակ համայնքում՝ 87, Վարդենիս համայնքում՝ 119, Մարտունի համայնքում՝ 258 ծրագրեր:

Իրականացված աշխատանքների մեջ ճանապարհների ասֆալտապատումը կազմել է 159 ենթածրագիր կամ 25.5 տոկոս, լուսավորության ցանցի կառուցումը՝ 100 ենթածրագիր կամ 16 տոկոս, խմելու ջրամատակակարմն համակարգերի կառուցումը՝ 103 ենթածրագիր կամ 16.5 տոկոս, ոռոգման համակարգերի կառուցումը՝ 82 ենթածրագիր կամ 13.1 տոկոս, փողոցների սալարկումը՝ 13 ենթածրագիր կամ 2.տոկոս, բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգումը՝ 24 ենթածրագիր կամ 3.8 տոկոս, գազաֆիկացումը՝12 ենթածրագիր կամ 1.9 տոկոս, մանկապարտեզների կառուցումը կամ հիմնանորոգումը՝ 37 ենթածրագիր կամ 5.9 տոկոս , զբոսայգիների կառուցումը՝ 34 ենթածրագիր կամ 5.4 և այլ 58 ենթածրագիր կամ 9.9 տոկոս:

2024 թվականին մարզի համայնքների կողմից մարզպետի աշխատակազմի միջոցով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված հայտերից միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել են թվով 18 ծրագրեր /112 ենթածրագիր/, որոնց նախահաշվային ընդհանուր արժեքը կազմել է 11,2 միլիարդ դրամ, այդ թվում՝ պետության մասնաբաժինը՝ 6,9 միլիարդ դրամ, կամ նախահաշվային ընդհանուր արժեքի 61 տոկոսը, համայնքային մասնաբաժինը՝ 4,3 միլիարդ դրամ, կամ 38,8 տոկոս, այլ ներդրողներ՝ 25,1 միլիոն դրամ, կամ 0,2 տոկոս:

Ընդհանուր առմամբ, 2024 թվականին մարզում առկա էր միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատված 226 ենթածրագրեր: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ ավարտվել են 119 ենթածրագրեր, 98 ենթածրագիր տեղափոխվում է 2025 թվական, իսկ 9 ենթածրագրեր չեն իրականացվելու:

Ծրագրերի իրականացման արդյունքում ընդամենը ծախսվել է 8 միլիարդ 945 միլիոն 242 հազար դրամ, որից ՀՀ կառավարության մասնաբաժինը կազմում է 5 միլիարդ 527միլիոն 691 հազար դրամ, համայնքային մասնաբաժինը՝ 3 միլիարդ 417 միլիոն 551 հազար դրամ: Իրականացվել է ջրամատակարարման-ջրահեռացման 25, ոռոգման համակարգի 24, սալարկման 2, ասֆալտապատման 21, փողոցային լուսավորության 29, գազաֆիկացման 2, ԲԲՇ տանիքներ- մուտքերի 2, հասարակական շենքերի վերանորոգման 1, մանկապարտեզների կառուցման-նորոգման 5, գույքի ձեռքբերման 1, զբոսայգու կառուցման 7 ծրագիր:

2025 թվականին մարզի համայնքների կողմից ներկայացվել է տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված թվով 32 սուբվենցիոն ծրագրային նախնական հայտեր՝ 142 ենթածրագրերով, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 17,4 միլիարդ դրամ, որից 11 միլիարդ դրամը ՀՀ կառավարության մասնաբաժինն է, 6,3 միլիարդ դրամը՝ համայնքային ներդրումը, 125 միլիոն դրամը՝ այլ ներդրողներինը:

Ներկա պահին միջգերատեսչական հանձնաժողովի հաստատման փուլում է գտնվում 28 ծրագիր՝ 95 ենթածրագրերով:

Ներկայացված 28 ծրագրային հայտերի ընդհանուր արժեքը, ըստ նախագծանախահաշվային փաստաթղթերի, կազմել է 12,6 միլիարդ դրամ, որից 7,8 միլիարդ դրամը ՀՀ կառավարության մասնաբաժինն է, 4,7 միլիարդ ՀՀ դրամը՝ համայնքային ներդրումը, 125,5 միլիոն դրամը՝ այլ ներդրողներինը:

Քաղաքաշինության ոլորտում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2024 թվականի ընթացքում կառուցվել է 61200 գծամետր խմելու ջրագիծ, 34900 գծամետր ոռոգման ցանց, 61300 գծամետր լուսավորության ցանց և 2900 գծամետր գազատար: Ասֆալտապատվել են 31100 գծամետր համայնքային նշանակության փողոցներ, սալարկվել է 21 650 քմ համայնքային նշանակության փողոցներ և մայթեր: Հիմնանորոգվել են 10 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ, Գավառ համայնքում կառուցվել են թվով 6 խաղահրապարակներ , Վարդենիկ բնակավայրում՝ 44 օրյա պատերազմում զոհվածների հուշահամալիր: Վերանորոգվել է Ճամբարակ համայնքի Թթուջուր բնակավայրի վարչական շենքը:

Հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներ են իրականացվել Մարտունի համայնքի Լիճք, Վարդենիկ, Զորագյուղ, Երանոս և Ճամբարակի թիվ 3 մանկապարտեզների շենքերում:

Սուբվենցիոն ծրագրերով կատարվող շինարարական աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից պարբերաբար կազմակերպվել են այցելություններ շինարարական հրապարակներ և կատարվել են մշտադիտարկումներ: 2024 թվականին թվով 226 օբյեկտներում իրականացվել են 377 մշտադիտարկումներ, որի

արդյունքում արձանագրվել են 35 թերություններ: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերացվել են 33 ծրագրերի թերություններ:

Անհետաձգելի և հրատապ լուծում պահանջող ծրագրեր

2024 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ իրականացվել են թվով 6 ծրագրեր՝ Մարտունի համայնքի Աստղաձոր և Զոլաքար բնակավայրերի երկու հատվածներում փլված հենապատերի վերականգնման, Վերին Գետաշեն բնակավայրի տարածքով անցնող 2,6 կմ երկարությամբ մարզային նշանակության ճանապարհահատվածի փոսային նորոգման, Վարդենիս-Այրք-Վերին Շորժա մարզային նշանակության 14 կմ երկարությամբ ավտոճանապարհի կոպճային ծածկով անցանելիության ապահովման և Սոթք բնակավայրում թվով 4 անհատական բնակելի տների կառուցման աշխատանքները:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով Մարզպետի աշխատակազմի աջակցությամբ իրականացվել է Ճամբարակ համայնքի Գարեգին Նժդեհ փողոցի սկզբնամասի 145 գծամետր հենապատի վերականգնման և կամուրջի կառուցման աշխատանքները:

2024 թվականի օգոստոս ամսից մեկնարկել է Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:

Վերը նշված շինարարական աշխատանքների իրականացման համար 2024 թվականին ՀՀ պետական բյուջեից փաստացի ծախսվել է **357 միլիոն 168 հազար դրամ**:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Հայաստանի Համահայկական Հիմնադրամի պատվիրատվությամբ 2024 թվականին մարզի տարածքում կառուցման և հիմնանորոգման շինարարական աշխատանքներ են իրականացվել Ներքին Գետաշենի N 1, Ճամբարակի N 1, Ջիլի, Լեռնակերտի, Շատջրեքի, Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ և Սևանի երաժշտական դպրոցներում, Վերին Գետաշենի N 2, Գագարինի և Ակունքի միջնակարգ դպրոցների մարզադահլիճներում, Փոքր Մասրիկի, Մադինայի, Արեգունու և Կախակնի մարզադահլիճներում,Աստղաձորի և Վարդենիսի Բանավան թաղամասի մանկապարտեզներում, բարեկարգման աշխատանքներ՝ Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրի կենտրոնական հատվածում:

Իրականացվել և ընթացքի մեջ են նաև Գավառի գյուղատնտեսական քոլեջի նոր մասնաշենքի և Լճափի բուժամբուլատորիայի կառուցման աշխատանքները:

2024 թվականի ընթացքում վերը նշված ծրագրերի շինարարական աշխատանքները իրականացնելու նպատակով փաստացի ներդրվել է **2 միլիարդ 614 միլիոն 370 հազար դրամ**:

2024 թվականի ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ, միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել են մարզի թվով 7 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերը:

Մարզի համայնքների կողմից 2024 թվականի ընթացքում տրվել է 899 շինարարության թույլտվություններ, որից՝ 103-ը Գավառ, 185-ը՝Սևան, 448-ը՝ Մարտունի, 117-ը՝ Վարդենիս, 46-ը՝ Ճամբարակ համայնքերում :

2024 թվականի ընթացքում մարզի համայնքապետարաններից և գերատեսչություններից մարզպետի աշխատակազմը ստացել է թվով 84 քաղաքաշինական փաթեթներ (իրավաբանական անձինք՝ 34, ֆիզիկական անձինք՝ 50): Կատարված ուսումնասիրությունների արդյունքում 19 քաղաքաշինական փաթեթներ ստացել են դրական եզրակացություններ, իսկ 65 քաղաքաշինական գործեր գտնվում են գերատեսչություններում կամ ուղարկվել են համայնքապետարաններ՝ լրամշակումներ իրականացնելու համար:

Ջրամատակարարում, ջրահեռացում և ոռոգման համակարգի արդիականացում

2024 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզում «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ իրականացվել են 1 միլիոն 56 հազար եվրոյի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝ մարզի Գագարին, Ծաղկաշեն, Գեղհովիտ, Լեռնակերտ բնակավայրերում և Վարդենիս քաղաքում կառուցվել է 10478 գծամետր բաշխիչ ցանց, իրականացվել են 8283 գծամետր տնային միացումներ, կառուցվել է 615 հատ ջրաչափական հոր և տեղադրվել են 88 ջրաչափական սարքեր: Սեմյոնովկա, Ծաղկաշեն, Ծաղկունք բնակավայրերում և Վարդենիս քաղաքում կառուցվել է 1725 մետր ջրատար:

2024 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով, իրականացվել են թվով 3 ջրամատակարարման համակարգերի վերակառուցման ծրագրեր, որի արդյունքում փաստացի ներդրվել է 290 միլիոն 580 հազար դրամ: Ներքին Գետաշեն բնակավայրի ջրամատակարարման համակարգի կառուցման համար ներդրվել է 176 միլիոն 608 հազար, Կարմիրգյուղ և Սարուխան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի կառուցման համար՝ 109 միլիոն 335 հազար դրամ, Վարսեր բնակավայրի ջրամատակարարման համակարգի կառուցման համար՝ 4 միլիոն 637 հազար դրամ: Շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում կառուցվել է 6278 գծամետր խողովակաշար և կատարվել են թվով 335 տնային միացումներ:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ոռոգման համակարգերի արդիականացման շրջանակներում իրականացվել է «Մանասի առու» ջրանցքի շուրջ 4000 գծամետր հատվածի վերականգնման աշխատանքները, որի փաստացի ներդրումը կազմել է 260 միլիոն դրամ:

2024 թվականի ընթացքում «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ Սևան քաղաքի Նալբանդյան փողոցի և հարակից

հատվածներում վթարված կոյուղագծերի վերանորոգման, մաքրման և լվացման, ինչպես նաև դիտահորերի վերանորոգման և մոտեցնող ճանապարհների բացման նպատակով ՀՀ պետական բյուջեից փաստացի ծախսվել է 50 միլիոն դրամ: Նույն ժամանակահատվածում իրականացվել են նաև Վարսեր բնակավայրի 121 գծամետր երկարությամբ վթարված խողովակաշարի վերանորոգման աշխատանքները, որի նպատակով ՀՀ պետական բյուջեից փաստացի ծախսվել է 28 միլիոն դրամ:

Մարզի ՋՕԸ-ի պատվիրատվությամբ 2024 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով, 130 միլիոն դրամի չափով, իրականացվել են Լանջաղբյուրի թիվ 1 ջրամբարին մոտեցնող 2670 գծամետր ջրատարի կառուցման աշխատանքները:

Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրում ՄԱԿ-ի և «ՀՈԿ» հասարակական կազմակերպության համագործակցությամբ կառուցվել է 2700 գծամետր երկարության ոռոգման ցանց, որի նպատակով ՄԱԿ-ի կողմից հատկացվել են խողովակները, փականները և շուրջ 4 տոննա ցեմենտ, իսկ շինարարական աշխատանքները իրականացվել է «ՀՈԿ» հասարակական կազմակերպության միջոցով, որի արդյունքում փաստացի ծախսվել է 24 միլիոն դրամ:

2024 թվականի ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավմանն ուղղված ծրագրերով մարզում փաստացի ներդրվել է **782 միլիոն 581 հազար դրամ և 1 միլիոն 56 հազար եվրո:**

Ռոյալթիներ

2024 թվականի ընթացքում Վարդենիս համայնքի ազդակիր թվով 4 բնակավայրերում՝ Սոթքում, Կուտականում, Կախակնում և Տրետուքում կատարվել են 185 միլիոն 410 հազար դրամի մասհանումներ, որի արդյունքում Վարդենիսի համայնքապետարանի պատվիրատվությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ Սոթք բնակավայրի ոռոգման ցանցի կառուցում՝ 580 գծամետր, փաստացի ծախսը՝ 27,540 միլիոն դրամ, Կուտական բնակավայրի ոռոգման արտաքին ցանցի կառուցում՝ 438 գծամետր, փաստացի ծախսը՝ 15 միլիոն 463 հազար դրամ, Կախակն բնակավայրի փողոցների ասֆալտապատում՝ 320 գծամետր, փաստացի ծախսը՝ 18 միլիոն 919 հազար դրամ, Տրետուք բնակավայրի փողոցների ասֆալտապատում՝ 160 գծամետր, փաստացի ծախսը՝ 8,8 միլիոն դրամ, Սոթք բնակավայրի փողոցների ասֆալտապատում՝ 540 գծամետր, փաստացի ծախսը՝ 44,1 միլիոն դրամ և Ծովակ բնակավայրի կապտաժի վերակառուցում, փաստացի ծախսը՝ 10,79 միլիոն դրամ:

Նշված ծրագրի շրջանակներում Սոթքում և Կուտականում կառուցվել է 1018 գծամետր երկարության ոռոգման ցանց, Կախակնում, Տրետուքում և Սոթքում ասֆալտապատվել են 1020 գծամետր երկարությամբ համայնքային նշանակության փողոցներ, Ծովակում իրականացվել է մեկ կապտաժի վերակառուցման աշխատանքներ և Վարդենիս համայնքի կարիքների համար ձեռք է բերվել մեկ ամենագնաց ավտոմեքենա:

Վերը նշված աշխատանքները իրականացնելու նպատակով հատկացված մասհանումներից փաստացի ծախսվել է **142 միլիոն 415 հազար դրամ**:

Ճանապարհաշինություն 2024 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ մարզում

իրականացվել են թվով 15 ճանապարհաշինական ծրագրեր, որոնց արդյունքում հիմնանորոգվել են 40,1 կմ, միջին նորոգման են ենթարկվել 40,6 կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ: Կառուցվել է մեկ կամուրջ, հիմնանորոգման ընթացքում է գտնվում մեկ կամուրջ, ինչպես նաև վերականգնվել է մեկ փլվածք:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ 2024 թվականին իրականացվել են մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 318.1կմ ընթացիկ ամառային և 401.1կմ ձմեռային պահպանության աշխատանքներ, որի արդյունքում ծախսվել է 965 միլիոն դրամ:

Վերը նշված աշխատանքները իրականացնելու արդյունքում ՀՀ պետական բյուջեից ծախսվել է **9 միլիարդ 50 միլիոն 146 հազար դրամ:**

Տրանսպորտ

Մարզի բոլոր բնակավայրերից տրանսպորտային սպասարկումն ապահովելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից նախատեսվում է ներդնել միասնական երթուղային ցանց: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և մարզի համայնքապետարանների կողմից մշակվել են երթուղիների շարժման ուղեգծերը և չվացուցակները, որոնք սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Երթուղային ցանցը բաղկացած է 38 երթուղիներից, իսկ սպասարկումը պետք է իրականացվի 110 միկրոավտոբուսներով և 12 ավտոբուսներով:

Մարզի միասնական երթուղային ցանցը բաժանվել է երկու չափաբաժինների՝ Գավառ, Սևան և Ճամբարակ առաջին չափաբաժին, Մարտունի և Վարդենիս երկրորդ չափաբաժին:

Առաջին չափաբաժնի մրցույթը կայացել է և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը սպասարկող կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր: Ներկայումս անհրաժեշտ մակնիշի թվով 69 տրանսպորտային միջոցները գտնվում են ներկրման փուլում: Երկրորդ չափաբաժնի համար երրորդ անգամ հայտարարված մրցույթը չի կայացել՝ հայտ չներկայացնելու պատճառով:

Մարզային նշանակության ճանապարհների սպասարկում

Ճանապարհների անցանելիությունը տարվա բոլոր եղանակներին ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող պետական նշանակության ճանապարհային ցանցի վրա իրականացվում են պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներ:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից հաշվետու ժամանակահատվածում կնքվել են մարզային նշանակության ավտոճանապարհների սպասարկման թվով 6 պայմանագրեր՝ 271,4 միլիոն դրամ գումարով, որի արդյունքում իրականացվել է մարզային նշանակության 177 կմ ընթացիկ ամառային և 224,8 կմ ձմեռային պահպանության աշխատանքներ: ՀՀ պետական բյուջեից փաստացի ծախսվել է **253,9 միլիոն դրամ**:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի համապատասխան մասնագետների կողմից մարզային նշանակության ճանապարհների սպասարկման վերահսկողության ժամանակ հայտնաբերված թերությունների նկատմամբ Մարզպետի աշխատակազմի կողմից կիրառվել են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նվազեցման գործակիցներ, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե է վերադարձվել 17,5 միլիոն դրամ:
Ընթացիկ ամառային պահպանության շրջանակներում իրականացվել է շուրջ 7500 քմ փոսային նորոգումներ, ճաքալցումներ, ջրահեռացման վաքերի և առուների մաքրում, կողնակների հարթեցում և լրացում, ինչպես նաև սպասարկման համար նախատեսված այլ աշխատանքներ: Վերանորոգվել են թվով 145 և տեղադրվել 43 նոր ճանապարհային նշաններ: Անհրաժեշտությունից ելնելով՝ իրականացվել են ճանապարհի երթևեկելի մասում բերվածքների մաքրման, կողնակների խոտհնձի և աղբի հեռացման աշխատանքներ:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 4749 գծամետր մետաղական արգելափակոցների պահպանության, ինչպես նաև 160 կմ ճանապարհների գծանշման աշխատանքներ:
Արտաքին կապերի և միջազգային համագործակցության ոլորտներում 2023 թվականի ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետը և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի նախագահը ստորագրել են ապակենտրոնացված համագործակցության 2023-2027 թվականների պայմանագիրը: Ըստ այդ համագործակցության՝ 2024 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ առողջապահության, մշակույթի, ֆրանսախոսության, զբոսաշրջության, գյուղատնտեսության ոլորտներում:

2024 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 9-ը ՀՀ Գեղարքունիքի մարզպետն այցելել է Ֆրանսիայի Հանրապետություն, որտեղ մասնակցել է Իզերում Հայաստանի ամսվա մեկնարկին, որը տեղի էր ունենում երրորդ անգամ, ինչպես նաև Իզերի դեպարտամենտի և Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի միջև համագործակցության 20-ամյակին նվիրված միջոցառմանը: Այցելության ընթացքում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, որոնց արդյունքում ձեռք են բերվել առողջապահության, զբոսաշրջության, ֆրանսախոսության, գյուղատնտեսության և

մշակույթի ոլորտներում համագործակցությունը շարունակելու և նոր ծրագրեր իրականացնելու հարցերում:

Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը Գեղարքունիքի մարզում 2024 թվականի ընթացքում իրականացրել է մի շարք մարդասիրական ծրագրեր, որոնք ուղղված են ազգաբնակչության խոցելի խմբերի կյանքի որակի բարելավմանը:

«Ձմեռային աջակցություն և ՄՄ կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում Սևան քաղաքի անապահով, անժառանգ և միայնակ 65 տարին լրացած 100 շահառուի տրվել է սնունդ և հիգիենիկ պարագաներ: Ծրագրի շրջանակում շահառուներին տրվել է նաև ծննդյան նվերներ: Ծրագիրն իրականացվում է Շվեյցարական Կարմիր Խաչի ֆինանսավորմամբ և համագործակցությամբ:

«Ժպիտների ակումբ» ծրագրի շրջանակում Սևանի թիվ 4, Ճամբարակի թիվ 1, Գավառի թիվ 5, Վարդենիսի թիվ 4 հիմնական և Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցներում իրականացվել է դասապատրաստում ԷՂ տեղահանված և տեղացի անապահով ընտանիքների 1-5-րդ դասարանների շուրջ 250 աշակերտների համար: Ծրագրի շրջանակում իրականացվել է նաև ամառային 5-օրյա և ձմեռային 3-օրյա ճամբար: Ընդհանուր առմամբ իրականացվել է շուրջ 7 միլիոն դրամի ներդրում: Ծրագիրն իրականացվում է ԿԽՄՖ ֆինանսավորմամբ և համագործակցությամբ:

«Արձագանք ԷՂ տեղահանված անձանց կարիքներին և ինտեգրում» ծրագրի շրջանակում Սևան քաղաքում բնակվող շուրջ 400 ընտանիքներին տրամադրվել է հիգիենիկ և սննդային փաթեթներ, անկողնային պարագաներ, ներքնակ, բարձ, տաքացուցիչ և թեյնիկ: Ծրագիրն իրականացվել է Քուվեյթի Կարմիր Մահիկի և ԿԽՄՖ-ի ֆինանսավորմամաբ:

ՀԿԽԸ միացել է նաև Կառավարության 40+10 հազար դրամ աջակցության ծրագրին, որի շրջանակում 12323 շահառուի տրամադրվել է կանխիկ դրամական աջակցություն.

Սահմանամերձ համայնքներին աջակցության շրջանակում Վարդենիսի Ազատ գյուղում 14 շահառու ընտանիքների տրամադրվել են խոշոր եղջերավոր անասուններ, ընդհանուր առմամբ իրականացվել է 25 000 ԱՄՆ դոլարի չափով ներդրում:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի՝ «ԵՄ-ն հանուն երկխոսության. աջակցություն Հարավային Կովկասում և Մոլդովայի Հանրապետությունում (Բաղադրիչ 2) հակամարտությունների փոխակերպմանը» ծրագրի շրջանակներում իրականացված աջակցության միջոցառումների ծավալը գնահատվում է ավելի քան 330,930 ԱՄՆ դոլար, որը սակայն չի ներառում դասընթացների և խորհրդատվական (արևային կայանների, կենդանիների արածեցման և ջրագծերի մասով) ծառայությունների արժեքը: 2024 թվականի սկզբին ՀՀ Գեղարքունիքի մարզպետը հանդիպում է ունեցել Ֆրանսիայի և Ճապոնիայի դեսպանների , ինչպես նաև մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից 2024 թվականին շարունակվել են Սևանա լճի ափամերձ՝ «Սևան» ազգային պարկի տարածքում կառուցվող խոշոր զբոսաշրջային համալիր կառուցման աշխատանքները:

Ընթացքի մեջ են գտնվում նաև 15 ՄՎՏ հզորությամբ արևային կայանի, Սևան համայնքի Լճաշեն և Վարսեր վարչական շրջաններում կառուցվող ջերմոցային համալիրի, արդյունաբերական տնկարանի, ինչպես նաև ենթակառուցվածքային, տեխնիկական և սպասարկման տարածքների կառուցման աշխատանքները: Ընթանում են նաև Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրում գտնվող զվարճային-հանգստյան և առագաստանավային միջազգային համալիրի կառուցման նախնական աշխատանքները: Համալիրի շահագործման շրջանակներում հյուրերին առաջարկվելու են՝ առագաստանավի վարման ուսուցման, առագաստային նավավարի վկայականի տրամադրման գործընթացի կազմակերպման, սիրողական և պրոֆեսիոնալ մրցարշավների կազմակերպման, սիրողական ձկնորսությամբ զբաղվելու ծառայություններ:

Ճամբարակ համայնքի Աղբերք գյուղում 7,4 հեկտար տարածքում կառուցվելու է 5 Մվտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայան՝ 4,3 միլիոն ն ԱՄՆ դոլար արժեքով: Նախապատրաստական աշխատանքներն ավարտման փուլում են, մոտ ապագայում կսկսվեն շինարարական աշխատանքները:

Անձնակազմի կառավարման ոլորտում 2024 թվականի դրությամբ գործող իրավական ակտերի համաձայն՝ նախապատրաստվել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

հաստատմանն է ներկայացվել 468 որոշման նախագիծ: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող **պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, մշակութային հաստատությունների և** առողջապահական հիմնարկների տնօրենների հետ կնքվել է 52 աշխատանքային պայմանագիր:

Կազմակերպվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գործող **հանրակրթական ուսումնական հաստատությունների և** առողջապահական հիմնարկների տնօրենների կարգապահական տույժերի ծանուցումները և որոշման նախագծերը ներկայացվել հաստատման:

Նախապատրաստվել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի հաստատմանն է ներկայացվել 1382 հրամանի նախագիծ:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում առկա թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարվել է 64 մրցույթ, որի արդյունքում 2-ը համալրվել է: Կատարվել է քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատականների մուտքագրում տեղեկատվական հարթակ, որի հիման վրա կազմակերպվել է մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում կատարող աշխատակիցների հետ կնքվել է 16 աշխատանքային պայմանագիր:

Վարվել է մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների տեղեկատվական հարթակը: Ներբեռնվել է քաղաքացիական ծառայողների վերաբերյալ տեղեկատվությունը՝ նշանակման, ազատման, արձակուրդի տրամադրման, խրախուսման, պարգևատրման, կարգապահական տույժի ենթարկման, կատարողականի գնահատման վերաբերյալ:
Մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների նկատմամբ նշանակվել է 6 ծառայողական քննություն, ծառայողական քննության արդյունքում 11 քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:
Աշխատանքները ժամանակին և որակյալ իրականացնելու համար ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի աշխատողները խրախուսվել են, ինչի արդյունքում նախապատրաստվել է պարգևատրման 49 հրամանի և որոշման նախագիծ:
Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի N 1080-Ա որոշման պահանջների համաձայն 2024 թվականի փետրվար ամսին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում տեղի է ունեցել

հաստիքների առավելագույն քանակի կրճատում, որով պայմանավորված՝ կազմակերպվել և իրականացվել է համապատասխան գործընթացը:

Փաստաթղթաշրջանառության ոլորտում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների թիվը կազմել է 1762, որից 118-ը վերահասցեագրվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմից: 1762դիմումներից բավարարվել է 1093-ը, մերժվել՝ 101-ը, **պարզաբանում է տրվել** 275 դիմումի, վերահասցեագրվել է 293 դիմում:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի, մարզպետի տեղակալի, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի և ստորաբաժանումների ղեկավարների կողմից կատարվել Է 1092 քաղաքացիների ընդունելություն, որոնցից 316-ը ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից, որից բավարարվել է 238-ը, մերժվել 78-ը: Գրանցվել է թեժ գծով ստացված 37 հեռախոսազանգ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ մուտքագրվել է 24072 մտից գրություն, 4935 ներքին փաստաթուղթ, կազմվել և առաքվել է ելից 11322 գրություն:

Արձանագրվել ու ՀՀ Գեղարքունիքի մարզպետի ստորագրման է ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի 3 նիստի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի մոտ կայացած 36 խորհրդակցությունների արձանագրությունները:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտում 2024 թվականին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում հրապարակվել է Գեղարքունիքի մարզպետի կողմից ընդունած 870, Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարների կողմից ընդունած 10 337, Գեղարքունիքի մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունած 1105 որոշում:

Հաշվետու ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզպետի կողմից մարզի համայնքներ, մարզային ենթակայության առողջապահական հիմնարկներ, կրթամշակութային հաստատություններ կատարած աշխատանքային այցերի, մարզպետի աշխատակազմում մարզպետի հանդիպումների, քննարկումների, խորհրդակցությունների, նիստերի, ուղերձների, մարզի խորհրդի նիստերի այլ բնույթի միջոցառումների լուսաբանման նպատակով Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում հրապարակվել է 500 տեղեկատվական բնույթի նյութեր:

Հաշվետու ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների, մարզային ենթակայության կրթական հաստատությունների տնօրենների, վարչատնտեսական մասի համակարգողների, ուսուցիչների, համայնքային ՀՈԱԿ-ների աշխատակիցների թափուր պաշտոնների համալրման, ինչպես նաև այլ բնույթի հայտարարությունների իրազեկման նպատակով Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում հրապարակվել է 1280 հայտարարություն:

Համայնքային նշանակության հողատարածքների վարձակալման, դրանց աճուրդ-վաճառքի կազմակերպման նպատակով Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում հրապարակվել է 49 հայտարարություն:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում և մարզի համայնքներում Գեղարքունիքի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունների անցկացման վերաբերյալ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում հրապարակվել է 24 նյութ, տարբեր կազմակերպություններից, լրատվամիջոցներից, սոցիալական հարթակներից, ինչպես նաև մի շարք քաղաքացիներից, տեղեկատվություն ստանալու նպատակով, հրապարակվել է 32 հարցում և դրանց պատասխանները:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան էջի փոստի միջոցով ստացվել և պատասխանվել է 80 հարցման:

«Արմենպրես» լրատվական գործակալության միջոցով հրապարակվել են 650 մարզի կենսագործունեությանն առնչվող լրատվական նյութեր:

Հրատարակվել է «Գեղամա աշխարհ» մարզային թերթի 29 համար:

Համագործակցություն է ծավալվել մարզային «Քյավառ» հեռուստաընկերության և հանրապետական տարբեր ԶԼՄ-ների հետ:

Պաշտպանության ոլորտում համագործակցություն և վերահսկողություն է իրականացվել համայնքներում զինապարտների հաշվառման, զորակոչի, զինվորական վարժանքների և վարժական հավաքների կազմակերպման նկատմամբ: Իրականացվել են համապատասխան պլանների մշակման և հաստատման աշխատանքները:

Մշակվել և հաստատվել են ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման կողմից 2024 թ. իրականացման ենթակա զորահավաքային միջոցառումների ծրագրերը, մարզպետի աշխատակազմի համապատասխան պաշտոնյաների ամրագրման և զինապարտ աշխատակիցների գրանցամատյանների վարման աշխատանքները:

Շինանյութի տեսքով աջակցություն է եղել Գեղարքունիքի մարզի վարչական տարածքի սահմանագծի հենակետերի օպերատիվ սարքավորմանն ու կահավորմանն ուղղված աշխատանքներին:Մարզպետի նախաձեռնությամբ աշխատակազմի աշխատակիցների կողմից ամանորյա նվերներ են տրվել մարզի զինվորականներին և տարածքում պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինվորներին:

Պաշտպանության բնագավառի իրավական ակտերի կատարումն ուսումնասիրելու նպատակով մարզի համայնքներում իրականացվել են վարչական վերահսկողության աշխատանքներ, որոնց արդյունքները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Անցկացվել է մարզային զորակոչային հանձնաժողովի 4 նիստ, կազմակերպվել են պարտադիր ժամկետային զորակոչերի նախապատրաստման և անցկացման աշխատանքները: 2024 թ. ամառային և ձմեռային զորակոչերը կատարվել են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

ՀՀ 2-րդ բանակային կորպուսի հետ համատեղ մշակվել է համագործակցության պլանը:

Իրավաբանական ոլորտում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, որպես տուժող, 2 քրեական գործի շրջանակներում ներկայացրել է գույքային հայց: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի շահերի պաշտպանության նպատակով ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել 2 վերաքննիչ բողոք, 1 վճռաբեկ բողոք, 1 վճռաբեկ բողոքի պատասխան:

2024 թվականի ընթացքում դիտարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ավագանու 1105 որոշում և համայնքի ղեկավարի 10337 որոշում: Մարզի համայնքների ավագանու որոշումների վերաբերյալ ամենամսյա հաշվետվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: